ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ

Սոցիալիզմի զարգացման ժամանակակից պայմաններում ՍՍՀՄ սոցիալ-տնտեսական առաջադիմության արագացման վերաբերյալ ՍՄԿԿ XXVII համագումարի մշակած ստրատեգիական կուրսի իրականացումը, գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա հասարակության ընդհանրական և ներդաշնակ զարգացման ապահովումը, առաջացող պրոբլեմների մասշտաբայնությունն ու բարդությունը, աշխատանքի, արտադրության և կառավարման տարբեր աստիճանների ու ոլորտների միջև կապերի ու հարաբերությունների ինտենսիվացումը կենսական անհրաժեշտություն են դարձրել կառավարման առանց բացառության բոլոր օղակների կողմից ընդունվող որոշումների մշտական կատարելագործումը։ Դա, ինքնին, վերջին հաշվով, նշանակում է կառավարման մակարդակի բարձրացում, որովհետև այդ մակարդակը կանխորոշող, կառավարման արդյունավետությունը պայմանավորող հիմնական լծակը կառավարչական որոշումն է։

Գրեթե չկա հասարակական հարաբերությունների, սոցիալ-տնտեսական կյանքի որևէ բնագավառ, որի վերաբերյալ չընդունվեն կառավարչական որոշումներ կամ անհնար լինի ընդունելու այդպիսիք։ Դա պայմանավորված է սոցիալիզմի տնտեսական ու սոցիալական-հոգևոր կյանքի էությամբ, սոցիալիստական արտադրական հարաբերությունների բնույթով։ Սոցիալիզմի պայմաններում որոշումների միջոցով կառավարելի են հասարակության սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի բոլոր բնագավառները, յուրաքանչյուր համակարգ՝ սկսած հասարակությունից ամբողջությամբ վերցրած մինչև նրա սկզբնական բջիջները։ Նաև դրանով է պայմանավորված սոցիալիզմի կենսունակությունը, նրա դիալեկտիկական զարգացման մշտական ընթացքի գոյությունը։ «Կառավարման սովետական կազմակերպումն է»[1] կանխորոշում սոցիալիզմի իրագործումը,—գրել է Վ. Ի. Լենինը։

Այդ կառավարման, հասարակական արտադրության գիտակցական և պլանաչափ կազմակերպման հանգուցային օղակը կառավարչական որոշումների ընդունումն է։ Կառավարման և կառավարչական որոշումների ընդունման հարաբերակցությունը համակարգի և ենթահամակարգի, ամբողջի և մասի այնպիսի հարաբերակցություն է, երբ վերջինի գոյությամբ է պայմանավորված առաջինի արդյունավետ գործառնությունը։ Կառավարչական որոշման ընդունումը կառավարման համակարգում լինելով ինքնուրույն, սակայն ամենաբարդ ֆունկցիա, փոխադարձ կապերի և փոխազդեցությունների մեջ է կառավարման մյուս բոլոր ֆունկցիաների հետ։ Այդ որոշումն է, որ նպատակամղվածություն է հաղորդում մարդկանց, նրանց խմբերի և ամբողջ հասարակության արտադրական, սոցիալական-հոգևոր գործունեությանը։ Դա սկզբնաօղակ է, ելակետ, ծրագիր է կառավարչական գործունեության իրականացման համար, գործուն միջոց՝ կառավարման սուբյեկտին ենթարկելու կառավարման օբյեկտը։ «Կառավարումը կազմակերպելու ժամանակ,— գրել է Վ. Ի. Լենինը,—հիմնական խնդիրն է՝ ստեղծել ձեռնհաս, հաստատակամ, եռանդուն ղեկավարություն»[2]։ Վերջինն է, որ հանդիսանում է արդյունավետ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 233։

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 455։

կառավարման, իշխանության պրակտիկայի իրականացման կարևոր գործոններից մեկը։ Իսկ այստեղ ամենից ավելի կարևոր նշանակություն ունի որոշումների նախապատրաստման և ընդունման ռացիոնալացումը, առավելագույն օգտակար որոշումների ընդունումը՝ դրանք ծառայեցնելով որպես նոր որակներում և նոր քանակներում նյութական ու հոգևոր բարիքների ստեղծման, արտադրողական ուժերի զարգացման և արտադրական հարաբերությունների, հասարակական պրոցեսների կատարելագործման էական նշանակության գործոններ։

Կառավարչական ամեն մի որոշում լինելով կառավարչական հարաբերությունների ծնունդ, համապատասխանելով այդ հարաբերությունների բնույթին, միաժամանակ իր նպաստն է բերում կառավարչական հարաբերությունների բազմակողմանի կատարելագործմանը։ Կարևոր է կառավարչական որոշումը դիտել սոցիալիստական հասարակական հարաբերությունների ամբողջության մեջ, ապահովել այդ որոշման և սոցիալիստական հասարակական հարաբերությունների միասնությունը, որպեսզի առաջինի մեջ մարմնավորվի սոցիալիստական հասարակության կամքը, լիարժեք իրացվեն տնտեսության սոցիալիստական սիստեմի հնարավորությունները, նրա սոցիալական արժեքները։ Ամենից առաջ նկատի առնենք կառավարչական որոշումների միջոցով սոցիալիստական սեփականատիրական հարաբերությունների իրացումը, որպեսզի սոցիալիստական հասարակական հարաբերությունները ծառայեն որպես կառավարչական որոշումներում նպատակամղվածություն ապահովելու օբյեկտիվ նախադրյալ։ Այդ դեպքում է, որ որոշումները, լինելով մարդկանց սուբյեկտիվ գործունեության արդյունք, կարող են համապատասխանել հասարակական արտադրության զարգացման օբյեկտիվ միտումներին, սոցիալիզմի կատարելագործմանն անհրաժեշտ բազմաբնույթ, բարդ և փոխադարձ կապերի ու փոխազդեցությունների ընդհանրության մեջ իրականացվող խնդիրներին։ Իրական հնարավորություններ կստեղծվեն բացահայտելու այն օրինաչափությունները, որոնց ազդեցությամբ ներկայումս զարգանում են համակարգի հասարակական առաջադիմության բնորոշ միտումները։ Կառավարչական որոշումը նախադրյալ է դառնում նաև այդ ճանապարհով կառավարչական հարաբերությունների մեջ աշխատանքի սուբյեկտի մտնելու, կառավարման սուբյեկտի և օբյեկտի միջև կառավարչական հարաբերությունների նոր մակարդակներում նրա զարգացման և կատարելագործման համար։ Այս առնչություններում կենսականորեն կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ օբյեկտիվ հնարավորությունների հավասար պայմաններում հավասար չեն կառավարման սուբյեկտիվ հնարավորությունները։ Կառավարչական որոշումն ըստ էության տվյալ սուբյեկտի կառավարչական վարքագիծն է, այն ամենից ավելի համակողմանիորեն է բնորոշում կառավարման սուբյեկտի սոցիալական-հոգևոր զարգացման մակարդակը, էությունը։ Որոշման ընդունումը կառավարող սուբյեկտի սոցիալական այն գործունեությունն է, ուր բացահայտվում են նրա կառավարչական կարողությունները, առարկայանում է նրա կամքը՝ ելնելով հասարակության արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման կոնկրետ, իրական պահանջներից։ Վերջինիս կարևորությունը բացատրվում է նրանով, որ հաճախ վճռական դեր են կատարում ոչ թե ռեալ իրականությունը ճանաչելու ձգտումը, իմացության պրոցեսի իրականացման արդյունքները, այլ կառավարիչի տրամադրվածությունը, նրա հոգեբանական իրավիճակը։

Կարևոր է, որպեսզի որոշումների նախապատրաստման և ընդունման պրոցեսը միաժամանակ դառնա այն նախապատրաստողների և ընդունողների սոցիալական, կառավարչական կարողությունների, գործիմացության կատարելագործման պրոցես։ Վ. Ի. Լենինը վերջինս դիտել է՝ որպես նոր հասարակարգի կառուցման կարևոր պայմաններից մեկը[3]։ «Ոչ մի բարեխղճություն,—

3 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 45, էջ 470։

որել է Վ. Ի. Լենինը,—կուսակցական ոչ մի հեղինակություն չի փոխարինի այն բանին, ինչը տվյալ դեպքում հիմնականն է, այն է՝ գործիմացությունը»[4]։ Կառավարչական որոշման ընդունումը կառավարիչից պահանջում է նաև ավելի ու ավելի մեծ հոգևոր պոտենցիալի առկայություն, գիտակցն գիտելիքների ավելի ու ավելի մեծ ծավալ և խորություն։ Դա անհրաժեշտ է կառավարվող համակարգի և յուրաքանչյուր ենթահամակարգի սոցիալ-տնտեսական, արտադրական օրգանիզմը նյութական և հոգևոր մշտական զարգացման ու շարժման մեջ պահել կարողանալու համար։ Նշենք, որ դրանով հենց այդ ընթացքում սոցիալական-հոգևոր զարգացում է ապրում նաև ինքը՝ կառավարող սուբյեկտը։ Կառավարիչների գիտական-կրթական մակարդակի ըստ ամենայնի բարձրացումը և անընդհատ կատարելագործումն այսօր հասարակության ամենահիմնական պրոբլեմներից է։ Դա է, որ ապահովում է նրանց մշտական նախաձեռնությունն ու ակտիվությունը, վերջիններում՝ ստեղծագործականությունը։ Ընդ որում շատ կարևոր է, որպեսզի այդ ակտիվության ստեղծագործականությունը ունենա ոչ միայն գիտական, այլև սոցիալ-բարոյական գետերմինացվածություն, որը և հանգեցնում է կառավարչական գործունեության ամբողջական կատարելագործման։

Այս ամենը դրսևորվում է ռացիոնալ կառավարչական վարքագծի, սոցիալիզմի էությունից բխող սոցիալ-բարոյական արժեքային կողմնորոշումների մեջ՝ առանց առաջին պլան մղելու սեփական անձի պատվախնդրությունը կամ հեղինակության հնարավոր կորուստները։ Իրոք, փաստ է այն, որ հասարակականորեն անհրաժեշտ խնդիրների լուծման վրա իրենց ազդեցությունն են գործում անհատական արժեքները։ Այստեղից էլ կառավարչական որոշումը մշակողների և ընդունողների սոցիալ-բարոյական պատասխանատվության զգացման զարգացման անհրաժեշտությունը, մանավանդ, եթե նկատի առնենք կառավարման ոչ քիչ օղակներում պատասխանատվության զգացման ատրոֆիայի, պահանջկոտության արժեզրկման առկայությունը կամ էլ կամայականության պլանավորված իրականացումը։ Ընդգծենք նաև կառավարչական գործերում խիստ վնասաբեր դարձած անտարբերության, հաճախ էլ ինքնախաբեության տարածում գտնելու հանգամանքը։ Որոշ կառավարիչներ էլ իրենց վատ աշխատանքը, կառավարման անկարողությունները քողարկելու նպատակով չեն խորշում դիմելու տնտեսական մանիպուլյացիաների և կառավարչական որոշումներն ընդունում են նկատի չառնելով գործող օրենքների շրջանակները։ Արդյունքում որպես կանոն ձեռք բերված նվաճումները երևութական են, կրում են սոսկ ժամանակավոր բնույթ և ինչպես կառավարիչներին, այնպես էլ կոլեկտիվներին բերում են սոցիալ-տնտեսական ու բարոյական որոշակի կորուստներ։

Քննարկելով կառավարման արդյունավետության բարձրացման հետ կառավարչական վարքագծի առնչությունների հարցը, ընդգծենք նաև ստեղծված կառավարչական նպաստավոր մթնոլորտի իրացման գործում օպերատիվություն դրսևորելու կառավարիչի կարողությունների, ժամանակակից փոփոխվող պայմաններին, նոր պահանջներին այդ վարքագծի համապատասխանության անհրաժեշտությունը։ Իրողություն է այն, որ շատ կառավարիչներ չեն կարողանում իրացնել նոր պայմանները, ընձեռվող նոր հնարավորությունները։ Աչքի է զարնվում ոչ միայն գործողություններում, սոցիալական վարքագծում, այլև մտածողության ոճի մեջ փոփոխություններ մտցնելու անկարողությունը։

Կառավարչական վարքագծի կատարելագործման, դրանով արդյունավետ կառավարման պրոցեսների վրա էականորեն ազդող գործոն է որոշումը մշակողների և ընդունողների սուվերենության պահպանումը, վերջինս որպես սոցիալիստական դեմոկրատիայի իրացման կարևոր պայման մշտապես գործողության մեջ դնելը։ Կառավարման սուբյեկտի համար ավտոնոմիայի, հարաբերական անկախության, ինքնուրույնության, սեփական գործունեության

---

4 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 45, էջ 525—526։

պլանավորման իրական հնարավորությունների ստեղծումն է, որ նրան մղում է սոցիալական գործնական պատասխանատվության։ Կառավարչական որոշումներում և պրակտիկ գործունեության մեջ խնամակալական միտումների բացառումը, կառավարման սուբյեկտի կողմից տվյալ պարագայում կառավարչական միջամտության նպատակահարմարության խնդրի ճիշտ լուծումը կառավարման արդյունավետության բարձրացման որոշիչ գործոն են։ Կարևոր է, որպեսզի մշտապես միմյանց համապատասխանեն կառավարման արդյունավետության բարձրացման ձգտումը և կառավարչական օպտիմալ որոշումների ընդունման հնարավորությունները, հաղթահարվեն հակասական իրավիճակները, որ ներկա ժամանակաշրջանում կան հասարակության ներկայացրած պահանջների և կառավարման, կառավարչական որոշումներ ընդունող կազմակերպությունների կառուցվածքների, իրականացրած ֆունկցիաների և, որ պակաս կարևոր չէ, որոշ օղակներում այդ գործում եղած անկուլտուրականության միջև, որը անխուսափելիորեն բյուրոկրատիզմ է սնում[5]։ Կառավարչական որոշումն այն խոչընդոտների հաղթահարմանը նպաստող լծակներից է, որոնք կառավարման անկատարելիության պատճառով ստեղծվում են սոցիալիզմի առաջընթացի ճանապարհին։

Հասարակության զարգացման ներկա ժամանակաշրջանում, երբ կենսականորեն անհրաժեշտ է դարձել երկրի սոցիալական և տնտեսական բոլոր ոլորտների խոր վերակառուցումը՝ հույժ կարևոր է նաև կառավարչական որոշումների ընդունման ըստ ամենայնի կատարելագործումը, որն ինքնին հանգեցնում է կառավարման ամբողջ համակարգի կատարելագործման։ Այստեղ վճռական դեր ունի որոշումների ընդունման ելակետային գործոնի կատարելագործումը՝ կենտրոնացված և տեղական կառավարման օպտիմալ հարաբերակցության ստեղծումը, նույնպիսի հարաբերակցության ապահովումը կառավարչական որոշումների ընդունման գործում։ Դա ունի իր ոչ միայն տնտեսական, արտադրական-տեխնիկական, այլև սոցիալ-բարոյական, քաղաքական հույժ կարևոր հետևանքները և ամենից առաջ առնչվում է կառավարման յուրաքանչյուր համակարգի և հասարակության բարոյա-քաղաքական հետագա ամրապնդման, սոցիալիզմի կատարելագործման ՍՄԿԿ ծրագրով առաջադրված ստրատեգիական խնդիրների լուծման հետ։

Խոսքն ըստ էության վերաբերում է կառավարչական որոշումների ընդունման և դրանց իրացման համար վճռական նշանակություն ունեցող սուբորդինացիային ու կոորդինացիային։ Սոցիալիզմի պայմաններում կառավարչական որոշումներն ընդունվում են ելնելով՝ կառավարման դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքներից, սակայն, իհարկե, այդ սկզբունքով ընդունվող որոշումներն իրենց հերթին որոշակիորեն նպաստում են դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի, վերջինի հիման վրա իրականացվող կառավարման կատարելագործմանը։ Կառավարման այս ոլորտում դեմոկրատական ցենտրալիզմի լիարժեք իրացումն է, որ կարող է կառավարչական որոշումներում ապահովել օպտիմալություն և կատարման հուսալիության մակարդակի բարձրացում։

Իհարկե, ինչպես Վ. Ի. Լենինն էր նշում, «խոշոր մեքենայական ինդուստրիան, այսինքն՝ սոցիալիզմի հենց նյութական, արտադրական աղբյուրն ու հիմքը—պահանջում է այն կամքի անպայման և խստագույն միասնականությունը, որն ուղղություն է տալիս հարյուրավոր, հազարավոր և տասնյակ-հազարավոր մարդկանց համատեղ աշխատանքին»[6], որը կենսականորեն անհրաժեշտ է դարձնում կառավարման կենտրոնացումը, և դա իր հիմնական մարմնավորումը գտնում է կառավարչական որոշումների ընդունման կենտրոնացման մեջ։ Այդ որոշումներն են, որ կարևորագույն դեր են կատարում ան-

---

5 Վ. Ի. Լենին, երկ, հ. 43, էջ 278։

6 Վ. Ի. Լենին, երկ, հ. 36, էջ 246։

հատների և նրանց կոլեկտիվների կամքերի միասնության ստեղծման գործում։ Իսկ այստեղ վճռական նշանակություն ունի տեղերում՝ կառավարման օբյեկտներում, իրերի վիճակի հստակ իմացությամբ, գործիմացությամբ որոշումների ընդունումը։ «Որպեսզի կենտրոնը կարողանա... իրոք ղեկավարել նվագախումբը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— դրա համար անհրաժեշտ է, որ ստույգ հայտնի լինի, թե ով, որտեղ և որ ջութակն է նվագում, որտեղ և ինչպես որ գործիքով է սովորել և շարունակում է սովորել, ով, որտեղ և ինչու է կեղծ նվագում... և աններդաշնակությունը շտկելու համար ում, ինչպես և ուր պետք է տեղափոխել և այլն»[7]։

Սոցիալիզմի պայմաններում, սակայն, կառավարման կենտրոնացումը, այդ նույն հիմունքներով կառավարչական որոշումների ընդունումը ենթադրելով «կուսակցության տնտեսական ստրատեգիայի հիմնական նպատակների իրացման»[8], զարգացման հիմնական ուղղությունների, պրոբլեմային խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման կենտրոնացում, միաժամանակ պահանջում է ընթացիկ օպերատիվ կառավարման, օպերատիվ պատասխանատվության ապակենտրոնացում։ «Իսկական դեմոկրատական իմաստով հասկացված ցենտրալիզմը նախատեսում է ... ոչ միայն տեղական առանձնահատկությունների, այլև տեղական նախաձեռնության, տեղական ձեռներեցության, ընդհանուր նպատակին ուղղված շարժման զանազան ուղիների, ձևերի, միջոցների լիակատար և անարգել զարգացման հնարավորությունը»[9]։ Սա հավասարապես վերաբերում է նաև կառավարչական որոշումների ընդունմանը։ Հարկավոր է, որպեսզի կենտրոնում և տեղերում ընդունվող որոշումների փոխհարաբերակցության հիմքում մշտապես և անխաթար դրվի Լենինյան այս սկզբունքը։ Կառավարման ստորադաս մարմինը ոչ թե պետք է միայն հասցեատիրոջ անունը փոխելով կրկնի վերադասի որոշումը, ինչպես հաճախ արվում է, այլ, ելնելով դրանից, ընդունի նախաձեռնող որոշումներ՝ նախատեսելով սեփական անելիքները՝ ելնելով կոնկրետ, փաստական իրավիճակից։ Սա վերաբերում է որոշումների ընդունման գործում ոչ միայն տարբեր աստիճանների վրա գտնվող և տարբեր ֆունկցիաների կատարման կոչված կառավարչական սուբյեկտների գործունեության զուգորդմանը, այլև այդ նույն ոլորտում վարչատարածքային և ճյուղային կառավարման զուգորդմանը, որը և ճյուղային ու տարածքային զարգացման ներդաշնակման որոշիչ նախադրյալներից է։

Կառավարման կենտրոնացման և ապակենտրոնացման հարաբերակցության առնչություններում նշենք նաև կառավարման տվյալ համակարգի, միևնույն հարցի վերաբերյալ որոշումների ընդունման զուգահեռականության վնասակարությունը, որը, որպես կանոն, իջեցնում է կառավարման արդյունավետությունը։ Սա ինքնին կենսական է դարձնում կառավարչական ոչ քիչ մարմինների որոշումներ ընդունող մեքենայի վերածվելու վտանգավոր պրակտիկայի վերացման անհրաժեշտությունը։ Դա Վ. Ի. Լենինի կողմից խստորեն դատապարտված[10] բյուրոկրատական ցենտրալիզմի ակնբախ դրսևորումներից է։ Վերջիններից է նաև գերատեսչականությունը, որի վտանգավորությունը Վ. Ի. Լենինը տեսնում էր դեռևս դրա ծննդյան օրերին։ Ընդգծելով «գերատեսչական փութկոտությունը չափազանցացնելու»[11] իրողությունը, այն, որ «մեզ մոտ բոլորը խրվել են «գերատեսչությունների» բյուրոկրատական զզվելի ճահիճը», Վ. Ի. Լենինը գտնում էր, որ «մեծ հեղինակություն, խելք, ձեռք է հարկավոր

---

7 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 7, էջ 28։

8 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարին, Երևան, 1986, էջ 54։

9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 188։

10 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 187։

11 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 406։

դրա դեմ ամենօրյա պայքար մղելու համար»[12]։ Հարկավոր է նշել, որ տասնամյակներ գոյատևող գերատեսչական սահմանափակվածությունն ու գերատեսչական էգոիզմը ոչ միայն չեն վերացել, այլև տարածվել են լայնությամբ ու խորությամբ, կատարելագործվել են՝ ստանալով նոր ձևեր ու նոր բովանդակություն և, ըստ էության, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, խանգարում են սոցիալիզմի առավելությունների իրացմանը[13]։

Վերոհիշյալ հասարակականորեն վնասակար կառավարման պրակտիկայի դրսևորումներից է և այն, որ հաճախ խաբուսիկ են ու միայն ձևականորեն գոյություն ունեն ձեռնարկությունների միջև հասարակական արտադրության անխափան զարգացման համար շատ կարևոր ուղղակի կապերը, շատ դեպքերում բացակայում է սոցիալական և տնտեսական պատասխանատվությունը՝ պայմանագրային պարտավորությունների կատարման համար։ Գերտեսչությունները կենտրոնացված կարգով որոշումներ են ընդունում այդ բնագավառին վերաբերող բոլոր մեծ ու փոքր հարցերի մասին, խառնվում են ամեն ինչի մեջ և ըստ երևույթին հիմնականում նպատակ հետապնդելով հաստատել իրենց գոյությունն ու մշտական կախման մեջ պահել ձեռնարկությունների կոլեկտիվներին և նրանց ղեկավարներին։ Կարծում են, թե տեղի է ունենում հեղինակության աղճատում, տարրալուծում, որի հետևանքով այդ հեղինակության անկում։

Գերկենտրոնացված կարգով որոշումների ընդունումն անխուսափելիորեն հանգեցնում է կառավարման գերկենտրոնացման, որն իր հետ անհրաժեշտաբար բերում է յուրաքանչյուր կառավարվող համակարգի, որպես գործունեության սուբյեկտի, ինքնակարգավորման և ինքնազարգացման հնարավորությունների սահմանափակում։ Խիստ դժվար է դառնում ռացիոնալացնելու այդ համակարգի հասարակական օրգանիզմի կենսագործունեության թեկուզ հիմնական ոլորտները։ Այստեղ նկատի առնենք սոցիալական համակարգի ինչպես սիստեմային, այնպես էլ կառուցվածքային կողմերի, նրա կառուցվածքային կազմակերպվածության ռացիոնալացման դերը համակարգի կենսագործունեության ինտենսիվացման գործում։ Հիմնականում ապահովվում է համակարգի սոցիալ-տնտեսական կյանքի պարզ վերարտադրությունը, սակայն դանդաղ է ընթանում որակական նոր մակարդակներում նրա համակողմանի անընդհատ զարգացումը։

Գերկենտրոնացված որոշումների ընդունումը չի կարողանում ապահովել նաև աշխատավորական կոլեկտիվների սոցիալ-տնտեսական նախաձեռնության ըստ ամենայնի ծավալումը։ Ինքնուրույնության արհեստական սահմանափակումը արգելակում է ստեղծագործական նախաձեռնության, սոցիալիստական ձեռներեցության և գործարարության զարգացումը։ Կան կառավարիչներ, ըստ որոնց տեղական ամեն մի նախաձեռնություն կարող է հանգեցնել ժողովրդական տնտեսության կրախի։ Քիչ չեն փաստերը, երբ նրանք անվստահության իրենց վարքագծով և կոնկրետ գործողություններով խոչընդոտում են կոլեկտիվներին տրված առանց այն էլ ոչ լիարժեք իրավունքների իրացումը։ Ըստ երևույթին ժամանակն է ընդհանրացնել այն պայքարի պատճառները և դրա հետևանքները, որ բազմաթիվ տարիներ աշխատավորական կոլեկտիվների ղեկավարները մղում են հանում ինքնուրույնության մեծացման, ձեռներեցության բացազատման, ընդդեմ իրենց գործունեության խստիվ ռեգլամենտավորման։

Այս առնչություններում ընդգծենք նաև կառավարչական որոշումների ընդունման լիազորությունների և պատասխանատվության լիակատար համապատասխանության կարևորությունը։ Ռեալ իրողություն է այն, որ այդ լիազորությունների և պարտականությունների ոչ հստակ բաշխման, սահմանազատման հետևանքով հաճախ ներլուծվում են կառավարման օբյեկտն ու սուբյեկտը և

---

12 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 437։

13 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարին, էջ 66։

անհնարին է դառնում պատասխանատվության կազմակերպումը՝ այստեղից բխող ծանր հետևանքներով։ Խիստ կարևոր է նաև, որպեսզի այդ պատասխանատվությունը համապատասխանի հասարակության զարգացման օբյեկտիվ պահանջներին։ Այդ դեպքում հիշյալ պատասխանատվությունը, վերածվելով լիարժեք սոցիալական պատասխանատվության, կդառնա համընդհանուր ընդգրկման պատասխանատվություն։

Այստեղ վճռական նշանակություն ունի այն, որ յուրաքանչյուր կառավարչական որոշում ելնի կուսակցության դիրեկտիվներից, նրա սոցիալ-տնտեսական և կուլտուր-գաղափարախոսական ստրատեգիական կուրսից։ «Քաղաքական կամ կազմակերպական ոչ մի կարևոր հարց,— գրել է Վ. Ի. Լենինը,— մեր հանրապետության մեջ պետական ոչ մի հիմնարկ չի լուծում, առանց կուսակցության Կենտկոմի ղեկավար ցուցումների»[14]։ Վ. Ի. Լենինն ամենից առաջ նկատի ուներ խնդիրների նկատմամբ քաղաքական ճիշտ մոտեցումը, որն ապահովում է արտադրական խնդիրների լուծումը[15]։ Այս դեպքում կառավարչական որոշումը կարող է հստակ ցույց տալ կառավարվող տվյալ համակարգի գործունեության ուղղությունը և միջոցներ նշել այդ ուղղությամբ նրա արդյունավետ գործառնության և արագացված զարգացման համար։

Ահա այսպիսի ելակետ և ուղղվածություն ունեցող կառավարչական որոշումներն են, որ լծակ են դառնում բարձրացնելու հասարակության ամբողջությամբ վերցրած և նրա յուրաքանչյուր բջջի կառավարելիության մակարդակը, որը սոցիալիստական հասարակական հարաբերությունների զարգացման մակարդակի իրական դրսևորում է։ Ընդ որում, կարևոր է, որպեսզի կառավարչական որոշումների միջոցով ապահովվի համակարգի գործառնության և զարգացման մշտական կառավարելիություն, որը պայմանավորում է նրա ինքնակառավարման անցնելու պրոցեսների ինտենսիվությունը։

Կառավարչական որոշումը կառավարման հանգուցային օղակի դեր է կատարում նաև յուրաքանչյուր համակարգի ամբողջական-անընդհատ զարգացման ապահովման գործում։ Որոշումը չի ծնվում խոպան միջավայրում, եթե եղել է համակարգը, ապա եղել են նաև նրա վերաբերյալ և նրա կողմից ընդունված որոշումներ, որոնց հիմքերի վրա ծնվում է նոր որոշումը։ Կառավարման պրոցեսի անընդհատությունը ենթադրում է որոշումների ընդունման պարբերականության, մեկը մյուսից բխելու և միմյանց լրացնելու սկզբունքի պահպանում։ Կառավարումը կառավարման ցիկլերի անընդհատության և ընդհատման դիալեկտիկական միասնություն է. նույնպիսի բնույթ ունի նաև կառավարչական որոշումների ընդունման ընթացքը։ Կառավարման յուրաքանչյուր փուլ, որը վերաբերում է այս կամ այն պրոբլեմային խնդրի լուծմանը, սկսվում է կառավարչական որոշման մշակմամբ և ընդունմամբ։ Ընդ որում, կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի այդ որոշումներում որպես կարևոր գործոն դիտվի յուրաքանչյուր համակարգի դինամիկ կայունության ապահովումը, որպես նրա արդյունավետ գործառնության և առաջադեմ զարգացման վճռող պայմանի։ Այստեղ արժեքավոր է նաև արդիական որոշման այն ուղղվածությունը, որը համակարգի գործառնությունը չի մղում ավելորդ լարվածության, մշտապես նկատի առնելով վերջինիս արտադրական-տնտեսական և սոցիալ-բարոյական բացասական հետևանքները։ Սոցիալ-տնտեսական և հոգևոր առումներով խիստ վնասաբեր է նաև համակարգի սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական կառուցվածքի կամայական, կարճ ժամանակահատվածում, արմատական-հանկարծակի փոփոխությունների իրականացման մղումը։ Արդյունավետ է, երբ փոփոխությունները կատարվում են համակարգի զարգացման տվյալ ժամանակաշրջանի հիմքերի վրա և այդ զարգացումը կրում է աստիճանական բնույթ։ Զարգացման ընթացքը, իհարկե, կարող է արագանալ, պահպանելով իր աստիճանականությունը և չստեղծելով գերլարվածություն։

---

14 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 37։

15 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 42, էջ 345։

Հաջորդաբար—պարբերաբար ընդունվող յուրաքանչյուր կառավարչական որոշում ըստ էության կոնկրետ ժամանակահատվածում համակարգի վերաբերյալ իմացությունների ե հետագա արդյունավետ գործառնության ու զարգացման միջոցառումների բարձրագույն սինթեզ է։ Համակարգը որպես բարդ և դինամիկ սոցիալական ընդհանրություն կառավարչական որոշումներով ընձեռվող նոր հնարավորություններով ապահովվող և խթանվող զարգացում է ենթադրում կամ՝ ձգտում է մշտապես պահելու հավասարակշռված, բալանսավորված գոյավիճակ։ Այդ որոշումը կարող է կրել ինչպես ամբողջական, այնպես էլ տարբերակված բնույթ։ Այն կարող է վերաբերել համակարգի գործունեությանն ամբողջությամբ վերցրած կամ նրա գործունեության որևէ ոլորտի, որևէ ենթահամակարգի, կամ մի խումբ ենթահամակարգերի ամբողջ գործունեությանը կամ այդ գործունեության որևէ ոլորտին։ Կարող է լինել նաև որոշում, որը նպատակամղված է ոչ թե սկզբունքային նշանակություն ունեցող խնդրի լուծմանը, այլ միջանկյալ, որը դառնում է նախապատրաստական փուլ՝ պրոբլեմայինի լուծման հասունացման, իրական հնարավորությունների ստեղծման համար։ Նշենք, ընդ որում որ սոցիալիզմի զարգացման ժամանակակից պայմաններում, երբ առաջացել է արտադրական-տնտեսական և սոցիալական-հոգևոր ավելի բարդ խնդիրների, նոր պահանջմունքների բավարարման անհրաժեշտություն, ավելի քան դժվարին է դարձել կառավարչական որոշումներին կոմպլեքսային նպատակամղվածություն հաղորդելու խնդիրը։ Այնուամենայնիվ, կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր որոշում, ինչպես նաև նրա յուրաքանչյուր բաղկացուցիչ մաս, ներկայացնի ամբողջականություն և նախատեսի համակարգի գոյության էությունն ու ձևը ապագա կոնկրետ ժամանակաշրջանում, նրա գործունեության նոր տեսակը, նոր որակը, համակարգի կամ ենթահամակարգի զարգացման տվյալ փուլի հիմնական բովանդակությունը։ Կառավարչական որոշումն ըստ էության համակարգի գալիք գործառնության ե զարգացման ձևերի ընտրությունն է։

Վերջինում վճռական է հասարակական արտադրության, սոցիալ-տնտեսական կյանքի կազմակերպման, կազմակերպչական գործունեության ռացիոնալացման նշանակությունը։ Ընդ որում, կառավարչական որոշումն ինքնին կառավարվող համակարգի զարգացման պրոցեսում կատարում է կազմակերպողի դեր, որի նշանակությունն անհնար է գերագնահատել սոցիալիզմի պայմաններում։ «Պայքարի մեր եղանակը կազմակերպումն է։ Մենք պետք է կազմակերպենք ամեն ինչ»,— գրել է Վ. Ի. Լենինը[16]։ Կառավարչական որոշումը դիրեկտիվ կարգով, որպես պարտադիր, ձևավորում ու կարգավորում է ներհամակարգային և միջհամակարգային կազմակերպական բազմաբնույթ հարաբերություններ, կոնկրետ ժամանակաշրջանի համար կազմակերպական որոշակի շրջանակների մեջ է գնում մարդու և կոլեկտիվի, տվյալ համակարգի սոցիալ-բարոյական վարքագիծը, նախանշում է դիալեկտիկական շարժման ու զարգացման ձևերն ու մեթոդները։ Ժամանակակից պայմաններում որոշումներում մշտապես նկատի է առնվում այն իրողությունը, որ հասարակական հարաբերությունների, արտադրության տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացումը, մարդկային գործոնի դերի մեծացումը կառավարման պրոցեսում ու կառուցվածքում անխուսափելիորեն ծնում են կազմակերպական նոր ձևեր։ Կենսականորեն անհրաժեշտ է դառնում կառավարչական որոշումը նպատակամղելու կառավարվող համակարգի սոցիալ-բարոյական կազմակերպման հասարակական մեխանիզմի կատարելագործմանը, մշտապես նկատի առնելով սոցիալ-բարոյական հարաբերությունների ներքին բարդությունը։ Որոշակիություն է մտցվում կառավարման սուբյեկտի և օբյեկտի վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ ստեղծված նոր փոխհարաբերություններում, դրա հիման վրա կազմակերպվում են այդ ոլորտում մարդկանց փոխազդեցությունները, գործունեության տարբեր տեսակների փոխներթափանցումը։ Իրականացվում է համա-

16 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 613։

պատասխանություն համակարգի (կամ նրա մեջ մտնող ենթահամակարգերի) ֆունկցիայի և սոցիալ-տնտեսական, արտադրական-տեխնիկական զարգացման մակարդակի միջև։

Սոցիալական իմացության իրականացման հիմնական նպատակը, վերջին հաշվով, մարդկանց և աշխատանքի միջոցների, մարդկանց և արտադրվող նյութական բարիքների, մարդու և կոլեկտիվի, կոլեկտիվների, կոլեկտիվի և հասարակության փոխհարաբերությունների, միմյանց նկատմամբ նրանց վերաբերմունքի իմացությունն է։ Կառավարման հիմնական խնդիրն էլ հենց, հիմք ունենալով կառավարչական որոշումները, հօգուտ հասարակության և յուրաքանչյուր անհատի այդ փոխհարաբերությունների կարգավորումն ու կազմակերպումն է։ Կարևոր է ընդգծել, որ նյութական և հոգևոր բարիքների արտադրության ժամանակակից բարդ պայմաններում, երբ յուրաքանչյուր աշխատավորական կոլեկտիվ հանդիսանում է հասարակության, որպես միասնական ժողովրդատնտեսական և սոցիալական-հոգևոր ամբողջության անքակտելի բաղկացուցիչ մասը, այդ կոլեկտիվներից ամեն մեկի աշխատանքի վերջնական արդյունքը, այդ արդյունքի տնտեսական և սոցիալ-բարոյական արժեքն ավելի ու ավելի մեծ չափերով և անմիջականորեն կախված է այլ կոլեկտիվների աշխատանքի արդյունքներից, միջկոլեկտիվային փոխազդեցություններից։ Այստեղից էլ այդ փոխազդեցությունների կազմակերպմանը նպատակաուղղված կառավարչական որոշումների կատարելագործման կենսական անհրաժեշտությունը։

Ըստ էության կառավարչական որոշումը տվյալ համակարգի կամ նրա գործառնության կոնկրետ ոլորտի վրա հասարակական հարաբերությունների ազդեցությունը կենտրոնացնելու հզոր միջոց է, սուբյեկտիվ, խմբային ներազդեցության լծակ է համակարգի զարգացման ընթացքի վրա։ Այդ նպատակասլաց ազդեցությունն իրականացվում է կառավարչական-կազմակերպչական, վերահսկման, կոորդինացիոն-կանոնավորման, տեխնիկական-տնտեսական, սոցիալ-բարոյական գործունեության ծրագրավորումով։ Որոշումը կարող է նպատակամղված լինել ներքին և արտաքին պայմանները փոխելու միջոցով վերափոխելու համակարգի ֆունկցիան, ընդհատելու շարժումը և դրան հաղորդելու բոլորովին նոր որոշակիություն ու դրանով վերածվելու արտադրական-տեխնիկական, սոցիալ-բարոյական վերափոխող ուժի, կարող է նաև հետապնդել համակարգի կենսագործունեության ապահովման, կատարելագործման, կարողությունների բացահայտման և ռացիոնալ իրացման հնարավորությունների ստեղծման, գոյություն ունեցող թերությունների վերացման, այն ուժերի պրակտիկ բացահայտման նպատակ, որոնք վերջին հաշվով կանխորոշում են համակարգի զարգացման ընթացքն ու արդյունքները։

Որոշումը լինելով կառավարման օբյեկտի վրա կառավարչական ներազդեցության իրականացման համար կառավարման սուբյեկտի գործունեության ծրագիր՝ սահմանում է նաև այն չափանիշները, որոնցով արժեքավորվում են համակարգի գործունեության կոնկրետ արդյունքները։ Այդ ներազդեցությունը վերջին հաշվով արտահայտվում է համակարգի ստեղծած նյութական և սոցիալ-բարոյական արժեքների մեջ։ Որպես ընդհանրական արդյունք՝ ընդգծենք արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների կատարելագործմանը, դրանց միջև մշտական համապատասխանության ապահովմանը կառավարչական որոշումների ընձեռած հնարավորությունները, վերջինների գործնական իրացումը։ Այստեղ կարևոր է, ինչպես ցույց տրվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, մշտապես նկատի առնել «այն պատկերացումների սնանկությունը, որոնց՝ համաձայն սոցիալիստական պայմաններում արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանությունը ապահովվում է ավտոմատ կերպով»[17]։

---

17 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարին, էջ 63։

Կառավարչական որոշման արդյունավետ գործառնությունը, աշխատավորական մասսաներին ակտիվության և ստեղծագործական նախաձեռնության մղելու նրա մոբիլիզացնող հնարավորություններն ամենից առաջ պայմանավորված են որոշման մեջ կառավարման սուբյեկտի և օբյեկտի նպատակների և շահերի ընդհանրության հստակ դրսևորմամբ։ Այստեղ, իհարկե, առաջնայինը կառավարվող համակարգի նպատակին որոշման համապատասխանությունն է։ Այս իմաստով կենսականորեն կարևոր է որոշման մեջ հասարակականի և խմբայինի դիալեկտիկայի բացահայտումը ու համակարգի կենսական դիրքորոշումների իմացությունը, նրա կոնկրետ նպատակների իրացման համար գործողությունների և միջոցների նախատեսումը։ Այս առնչություններում վճռող դեր ունի հասարակության, կոլեկտիվի և անհատի շահերին կառավարչական որոշման համապատասխանությունը, նրանց բանական պահանջմունքները բավարարող գործողությունները խթանելու կարողությունը։ Նկատի ունենալով, որ «յուրաքանչյուր տվյալ հասարակության տնտեսական հարաբերությունները ամենից առաջ երևան են գալիս ինչպես շահեր»[18], որպես հասարակության և կոլեկտիվի կառավարելիության մակարդակի բարձրացման հիմնական լծակ պետք է ծառայի յուրաքանչյուր աշխատավորի նյութական խթանման ճիշտ կազմակերպումը՝ մշտապես ելնելով այն իրողությունից, որ յուրաքանչյուր խթանում ունենում է իր համապատասխան ռեակցիան։ Ընդ որում, որոշումը կարող է բովանդակել հասարակության, կոլեկտիվի և անհատի ոչ միայն անմիջական, այլև մոտակա, հեռանկարի շահերն ու նպատակները, դրանց համապատասխանեցման նոր մակարդակները։ Այստեղ միաժամանակ ընդգծենք այն կարևորը, որ հիշյալ շահերի համապատասխանությունը դրանց նույնությունը չէ. շահերի համապատասխանեցման անընդհատ պրոցեսը սոցիալիզմի զարգացման ոչ մի փուլում չի կարող հանգեցնել դրանց նույնությանը, այսինքն դրանց միջև եղած հակասությունների լիակատար հաղթահարմանը։ Վերջինիս վճռական նշանակություն ունեցող նախապայմանը հասարակության և յուրաքանչյուր անհատի պահանջմունքները բավարարող հասարակական արտադրության համակարգային զարգացումն է, նկատի ունենալով. որ այնտեղ, ուր ինդիվիդները ունեն պահանջմունքներ, արդեն այդ պատճառով ունեն որոշ հակում և որոշ խնդիր[19]։ Այստեղից էլ սոցիալ-բարոյական պահանջմունքների բացազատման և բավարարման համար ռեալ պայմանների ապահովումը։ Կառավարչական որոշումը պետք է բովանդակի արտադրության զարգացման և մարդկանց պահանջմունքների բավարարման բազմակողմանի և բազմաբնույթ փոխազդեցությունների տեսանելի մեխանիզմ՝ մշտապես ելնելով հասարակության մեջ, հասարակության զարգացման տվյալ մակարդակից բխող բաշխման հարաբերությունների էությունից։ Այստեղ նկատի առնենք նաև հասարակության մեջ և տվյալ համակարգում նյութական ու սոցիալական -հոգևոր բարիքներից օգտվելու հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը։ Ուրիշ բան է, իհարկե, դրանցից օգտվելու յուրաքանչյուրի սոցիալական-հոգևոր կարողությունների խնդիրը։ Հիշյալ հնարավորությունների ստեղծումը սոցիալիստական արտադրական և հասարակական այլ հարաբերությունների կատարելագործման, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կուսակցության ստրատեգիական կուրսի իրականացման որոշիչ նախադրյալներից է։ «Որքան ավելի խորն է այն վերափոխությունը, որ մենք ուզում ենք կատարել,— գրել է Վ. Ի. Լենինը,— այնքան ավելի շատ հետաքրքրություն... պետք է առաջ բերել նրա նկատմամբ»[20]։ Կառավարչական յուրաքանչյուր որոշում պետք է բովանդակի այս փոխազդեցությունը, ունենա

---

18 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1978, էջ 488։

19 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 279.

20 Վ. Ի. Լենին, Նույն, հ. 42, էջ 173—174։

աշխատավորական մասսաների նյութական և սոցիալական-հոգևոր շահերի բավարարման իրական արդյունքների հանգեցնող ուղղվածություն։ Սոցիալիզմի կատարելագործումն անհնար է իրականացնել որոշումների, հրամանների և կարգագրությունների խստացման, պատժողական սանկցիաների հերթական ու անհերթ կամպանիաների կիրառմամբ։

Կառավարչական որոշումների դերը, որպես կառավարման որոշիչ լծակի, ավելի քան վճռող է երկրի տնտեսական կյանքի, հասարակական արտադրության կազմակերպման ընդգավառում։ «Պետական իշխանության հակադարձ ազդեցությունը տնտեսական զարգացման վրա կարող է երեք տեսակ լինել,— գրել է Ֆ. Էնգելսը։— Այն կարող է գործել միևնույն ուղղությամբ. այդ դեպքում զարգացումն ավելի արագ է ընթանում, այն կարող է գործել տնտեսական զարգացմանը հակառակ, այդ դեպքում ամեն մի մեծ ժողովրդի պետական իշխանությունը որոշ ժամանակամիջոցից հետո կործանվում է. կամ էլ այն կարող է որոշ ուղղություններում տնտեսական զարգացման առջև արգելքներ դնել և այն առաջ մղել ուրիշ ուղղություններով։ Այդ դեպքը, վերջիվերջո, հանգում է նախընթաց դեպքերից մեկին։ Սակայն պարզ է, որ երկրորդ ու երրորդ դեպքերում քաղաքական իշխանությունը կարող է մեծագույն վնաս պատճառել տնտեսական զարգացմանը և կարող է ուժերի ու նյութերի մասսայական վատնում առաջացնել»[21]։ Ինչ վերաբերում է էկոնոմիկայի զարգացման վրա սովետական պետական իշխանության, պետական մարմինների ունեցած ազդեցությանը, ապա վերևում նշված ուղիներից նրան վերաբերողը, իհարկե, առաջինն է՝ համապատասխան տրդյունքներով, երկրորդը՝ որպես օրինաչափություն բացակայում է, ինչ վերաբերում է կառավարչական ազդեցության երրորդ ուղու գոյությանը, ապա բազմաթիվ տարիների ընթացքում կուտակված փաստերի և փորձի վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ նշված երրորդ «դեպքը» օտար չէ նաև էկոնոմիկայի ոլորտում մեր պետական մարմինների գործունեությանը՝ համապատասխան հետևանքներով։ Դրա հիմնական պատճառը պետք է փնտրել այն բանի մեջ, որ էկոնոմիկայի կառավարման մակարդակը տարիներ շարունակ ետ է մնում հասարակության նյութատեխնիկական, սոցիալական-հոգևոր զարգացման պահանջներից։ Տարբեր նախադրյալներ ունեցող կառավարման անկարողությունները, որոշ ոլորտներում հասարակական հարաբերությունների անկատարությունները են, որ (այստեղ ամենից առաջ նկատի ունենք կառավարման մի շարք օղակներում, առանձնապես որոշ վերին էշելոններում, հրապարակայնության, ռեալ դեմոկրատիզմի պակասը կամ բացակայությունը, դրանց գործունեության, կառավարչական որոշումների մշակման վրա աշխատավորական մասսաների ազդեցության անբավարար հնարավորությունը և այլն) որոշ հանգամանքներում հանգեցնում են Ֆ. Էնդելսի հիշատակած գործունեության երրորդ որակին։ Վերջինս հիմնականում դրսևորվում է պետական մարմինների ընդունած կառավարչական որոշումների հետևանքով էկոնոմիկայի վրա ունեցած բացասական ազդեցության մեջ, որոշումներ, որոնք, մեղմ ասած, սխալ են, վախվորած-անհամարձակ կամ անկատար։ Ելքը, որը որպես հրամայական պահանջ առաջադրվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, հիշյալ մարմինների գործունեության վճռական վերակառուցումն է, արմատական ռեֆորմի իրականացումը, որը բացառում է մասնակի բարելավումներով սահմանափակվելը[22]։

Կառավարչական որոշումը, լինելով հասարակության տնտեսական կյանքի կառավարման հզոր լծակ, միաժամանակ հասարակության սոցիալական-հոգևոր կազմակերպման ազդու միջոց է։ Որոշման մշակումն ու ընդունումը կառավարման սոցիալական կառուցվածքի ինտեգրալ մասն են, առանց որի անհնար է կառավարման իրականացումը։ Կարևոր է, որպեսզի կառավարչական

---

[21] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1978, էջ 651։

[22] Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցումը ՍՄԿԿ XXVII համագումարին, էջ 54, 56, 67։

որոշումներում առանձնակի տեղ տրվի համակարգի հասարակական կյանքի սոցիալական ոլորտի կառուցման, սոցիալական-հոգևոր հարաբերությունների արտադրության, անհատի սոցիալականացման պրոցեսների, համակարգի սոցիալական էությունը պայմանավորող, սոցիալական կառուցվածքի կատարելագործմանը նպաստող գործոնների կազմակերպմանը, մշտապես նկատի ունենալով, որ «մենք այժմ արմատական սոցիալական փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ ժամկետներ սահմանելու՝ պատմության մեջ բավականին հազվադեպ առիթ ենք ստացել»[23]։ Սոցիալական կառավարումն է, որ ռեալ հնարավորություններ է ստեղծում մարդկանց և ամբողջ հասարակության պոտենցիալ հոգևոր կարողությունների բացազատման, մոբիլիզացման և իրացման համար։

Հասարակության զարգացման ժամանակակից փուլում իրական հնարավորություններ են ստեղծվել կառավարչական որոշումները նպատակամղելու հոգևոր արտադրության, մարդկանց հոգևոր կյանքի վերարտադրության արդյունավետ կազմակերպմանը։

Կառավարչական որոշումների միջոցով արդյունավետ կառավարման իրականացման վճռող պայմաններից է այդ որոշումներում տնտեսականի և սոցիալականի, սոցիալ-բարոյականի միևնույն կոմպլեքսի մեջ իրականացման նախատեսումը, տնտեսական և սոցիալ-բարոյական առաջընթացի կապերի ու փոխազդեցությունների նպատակասլաց իրացումը։ Իրողություն է այն, որ ոչ արտադրական ոլորտի արդյունավետ կառավարումն է, որ հիմնական նախադրյալներ է ապահովում արտադրական ոլորտի արդյունավետ գործունեության համար։ Առաջին պլան են մղվում արտադրության ինտենսիվացման արտատնտեսական գործոնները և միաժամանակ նախատեսվող տնտեսական, տեխնիկական, կազմակերպական և այլ միջոցառումների սոցիալական արդյունավետության խնդիրը, համակարգի սոցիալական-հոգևոր առաջադիմության համար առավել իրական հնարավորությունների ապահովումը, դրանով նաև աշխատանքի նկատմամբ սոցիալ-բարոյական շահագրգռվածության բարձրացումը։ Դա հանգեցնում է կառավարչական որոշումների սոցիալ-բարոյական հագեցվածության հարստացման, դրանով նաև յուրաքանչյուր համակարգի կառավարելիության մակարդակի բարձրացման։

Ժամանակակից պայմաններում ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում կառավարչական որոշումների ընդունման մեխանիզմի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման՝ կուսակցության XXVII համագումարի մշակած ստրատեգիական կուրսի իրականացման պահանջների հետ։ Դրա կարևորագույն պայմանն է կառավարման օրգանիզմը լցնել այնպիսի հնարավորություններով, որպեսզի նա կարողանա վճռականորեն հաղթահարել լճացումն ու պահպանողականությունը, կառավարչական օպտիմալ որոշումների միջոցով լուծել հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների որակական նոր մակարդակի բարձրացման խնդիրները։

УПРАВЛЕНЧЕСКОЕ РЕШЕНИЕ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЙ ПРОГРЕСС ОБЩЕСТВА

МИКАЕЛ МИНАСЯН

Резюме

Управленческое решение обеспечивает целенаправленность производственной, социально-духовной деятельности людей, их групп и всего общества. Принятие такого решения—это то социальное действие субъекта управления, в котором раскрываются его управленческие способ--

23 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 45, էջ 455։

ности, опредмечивается его воля, определяемая осознанием реальных потребностей развития производительных сил и производственных отношений общества. Выработка оптимального управленческого решения требует наличия у субъекта управления большого духовного потенциала, социально-нравственной ответственности, компетентности, глубоких научных знаний. Совершенствование управленческих решений может способствовать преодолению противоречий между требованиями, предъявляемыми обществом, с одной стороны, и уровнем управления, структурой органов, принимающих решения, их функциями—с другой.

Уравленческое решение выступает как высший синтез конкретных знаний об управляемой системе и мероприятий, направленных на его дальнейшее эффективное развитие как действенное средство сосредоточения воздействия общественных отношений на данную систему с использованием соответствующих стимулов. Важнейшая задача—наделить управленческий организм такими возможностями, чтобы он сумел посредством оптимальных управленческих решений организовать реализацию задач по коренной перестройке всех сфер социально-экономической жизни общества, выдвинутых XXVII съездом КПСС.